

ԿԱՐԾԻՔ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ

Անի Ժորայի Սարգսյանի «Տնտեսության պետական կարգավորման հարկային գործիքների կիրառման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով ատենախոսության վերաբերյալ՝ ներկայացված Ը.00.02- «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Երկրի հարկային ներուժի առավելագույն իրացման համար հարկային մարմինները պետք է ոչ միայն խստորեն վերահսկեն հարկային օրենսդրության պահանջների կատարումը, այլև ապահովեն հարկային վարչարարության գործառույթների արդյունավետ իրականացումը: Հարկային վարչարարության սկզբունքները պետք է բխեն նաև երկրի հարկային ներուժից և հարկային բեռի մակարդակից՝ հաշվի առնելով հարկ վճարողների ֆինանսատնտեսական հնարավորությունները և կարողությունները:

Հայաստանի Հանրապետությունը, քաղաքական անկախություն հռչակելուց հետո, ձեռնամուխ եղավ լայնամասշտաբ տնտեսական բարեփոխումների, որոնց հիմնական նպատակներից մեկն էլ շուկայական հարաբերությունների պահանջներին բավարարող հարկային համակարգի ստեղծումն էր: Այդ ուղղությամբ իրականացված քայլերից առաջինը օրենսդրական և ինստիտուցիոնալ հիմքերի ձևավորումն էր, ինչի արդյունքում ընդունվեցին հիմնական հարկատեսակներին վերաբերող օրենքները և ստեղծվեց հարկային վարչարարություն իրականացնող կառույցը՝ հարկային տեսչությունը: Վերջին տարիներին հանրապետությունում արձանագրված հարկաբյուջետային հիմնական ցուցանիշները վկայում են հարկային համակարգում որոշակի դրական միտումների մասին: Ըստ էության, դրա արտացոլում են հանդիսանում ինչպես ընդհանուր հարկային եկամուտների, այնպես էլ առանձին հարկատեսակների գծով արձանագրված աճը: Ակնհայտ է, որ հարկային քաղաքականության խնդիրների լուծումն առանց հարկային վարչարարության կատարելագործման գրեթե բացառվում է: Տվյալ հիմնահարցն առավել քան արդիական է Հայաստանի Հանրապետության համար, քանի որ գործող հարկային համակարգում առկա հիմնախնդիրների զգալի մասը պայմանավորված է իրականացվող վարչարարության դեռևս ոչ բավարար արդյունավետությամբ, ինչն

ենթադրում է առաջիկա տարիներին դրա բարձրացման ուղղությամբ հետևողական քաղաքականության իրականացում: Ատենախոսությունում քննարկված հիմնախնդիրներից շատերը Հայաստանի Հանրապետությունում ամբողջական ու համակարգված ուսումնասիրման չեն ենթարկվել և չեն կրկնում այլոց կողմից առանձին հարցերի շուրջ կատարված ուսումնասիրությունները, որով էլ պայմանավորված է ստացված արդյունքների գիտական նորոյթը:

Հարկային վարչարարության կատարելագործման հիմնահարցերը դիտարկվել են ընդհանուր տնտեսական քաղաքականության և հարկային համակարգի գործունեության համալիրում, որի արդյունքում մշակված մոտեցումների գործնական կիրառումը, մեր կարծիքով, կընձեռի լայն հնարավորություններ Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման համար:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ և ԽՆԴԻՐՆԵՐԸ

Աշխատանքի հիմնական նպատակը Հայաստանի Հանրապետությունում տնտեսության պետական կարգավորման հարկային գործիքների կատարելագործմանն ուղղված մոտեցումների և առաջարկությունների մշակումն է, որին հասնելու համար աշխատանքում դրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրել տնտեսության պետական կարգավորման էությունը և գնահատել հարկային համակարգի դերն այդ գործընթացում,
- ուսումնասիրել հարկային քաղաքականության սկզբունքներն ու մեթոդները, գնահատել դրանց տեղը հարկային հարաբերությունների համակարգում,
- վերլուծել հարկային համակարգի բնականոն գործունեության ապահովման և հարկային քաղաքականության իրականացման վրա ազդող գործոնները,
- վերլուծել Հայաստանի Հանրապետությունում հարկային կարգավորման օրենսդրահիրավական և կազմակերպական հիմքերը, ուսումնասիրել այդ ուղղությամբ առկա միջազգային փորձը և գնահատել դրա տեղայնացման հնարավորությունները հանրապետությունում,
- բացահայտել տնտեսության պետական կարգավորման հարկային գործիքների կիրառման հիմնախնդիրները և դրանց արդյունավետության վրա ազդող գործոնները ՀՀ-ում,

- մշակել հարկային համակարգի զարգացման և հարկային կարգավորման բարելավման հիմնական ուղղությունները Հայաստանի Հանրապետությունում:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության առաջին՝ «Տնտեսության պետական կարգավորման հարկային գործիքների էությունը և տնտեսական բովանդակությունը» գլխում հարկային վարչարարությունը ներկայացվել է որպես հարկային հարաբերությունների իրականացման կազմակերպ-կառավարչական համակարգ, որն իր մեջ ներառում է գործառույթների, ձևերի և մեթոդների համախումբ և կիրառվում է բյուջետային համակարգում հարկային եկամուտների կենտրոնացման նպատակով: Տնտեսության հարկային կարգավորումն իրականացվում է ուղղակի և անուղղակի հարկերի միջոցով, որոնցից յուրաքանչյուրն առանձնահատուկ դեր ունի տվյալ գործընթացում և ապահովում է որոշակի շրջանակի խնդիրների լուծում: Ուղղակի հարկերի միջոցով հարկվում են ֆիզիկական և իրավաբանական անձանց եկամուտներն ու գույքը, իսկ անուղղակի հարկերի միջոցով՝ սպառումը, ինչի արդյունքում հարկային բեռի ծանրությունը փաստացի ընկնում է վերջնական սպառողների վրա: Պետք է նշել, որ հարկային կարգավորման գործիքները դասակարգվում են ըստ ներգործության նպատակի (տնտեսական, սոցիալական, բնապահպանական), ըստ ներգործության ուղղության (խթանիչ, ապախթանիչ, փոխհատուցիչ), ըստ գործունեության մեխանիզմի (համակարգային, համալիր, լոկալ) և ըստ այլ հատկանիշների: Տնտեսության հարկային կարգավորման գործընթացում պետությունը, որպես կանոն, հիմնականում կիրառում է հետևյալ գործիքները.

- հարկային բեռի կամ հարկային ճնշման մակարդակը,
- հարկման ռեժիմները և համակարգերը,
- հարկային դրույքաչափերը,
- հարկային արտոնությունները և նվազեցումները,
- հարկային սանկցիաները:

Հարկային ճնշման մակարդակը ձևավորվում է հարկ վճարողի ֆինանսատնտեսական դրության վրա պետության կողմից հարկերի միջոցով ներգործության արդյունքում: Ակնհայտ է, որ դրանից է մեծապես կախված վերջիններիս գործունեության ընդլայնման հնարավորությունները: Հարկային ճնշման բարձր մակարդակի պայմաններում, որպես կանոն, վերանում են հարկ վճարողի

կողմից օրինական գործունեության ծավալման արդյունքում եկամուտներ ստանալու հնարավորությունները, ինչի հետևանքով նա կամ դադարում է գործունեություն իրականացնել, կամ էլ տեղափոխվում է սովերային գործունեության դաշտ: Հատկանշական է, որ երկու դեպքում էլ տեղի է ունենում բյուջետային եկամուտների կորուստ՝ դրանից բխող տնտեսական և սոցիալական հետևանքներով: Միևնույն ժամանակ, հարկային ճնշման ցածր մակարդակը հարկ վճարողների համար ստեղծում է տնտեսական գործունեության ընդլայնման հնարավորություններ, նվազեցնում է սովերային գործունեությամբ զբաղվելու և հարկերի վճարումից խուսափելու գայթակղությունը: Սակայն պետք է նաև նկատի ունենալ, որ հարկային ճնշման չափից ցածր մակարդակը լուրջ սպառնալիքներ է ստեղծում բյուջետային եկամուտների կորստի համար: Հետևաբար, հարկային ճնշման մակարդակը որոշելիս պետությունը պետք է առաջնորդվի երկու խնդիրների լուծման միջև «ոսկե միջին» ապահովելու սկզբունքով: Հարկային կարգավորման նպատակով տարբեր պետություններ կիրառում են հարկման հատուկ ռեժիմներ կամ համակարգեր, որոնց հիմնական նպատակը դրանում ընդգրկված հարկ վճարողների համար հարկման տեսանկյունից առավել բարենպաստ պայմանների ապահովումն է: Ընդ որում, վերջինս կարող է տեղի ունենալ ինչպես վարչարարական պարզեցված ընթացակարգերի կիրառման, այնպես էլ հարկերից ամբողջությամբ կամ մասնակի ազատման ճանապարհով:

Ատենախոսության երկրորդ՝ «Տնտեսության պետական կարգավորման հարկային գործիքների կիրառման առանձնահատկությունները ՀՀ-ում» գլուխը նվիրված է հարկային վարչարարության համակարգում հարկային հսկողության տեղի և դերի, ՀՀ-ում հարկային վարչարարության օրենսդրափրավական և կազմակերպական հիմքերի, ինչպես նաև դրա արդյունավետության վրա ազդող գործոնների և հիմնախնդիրների ուսումնասիրությանը: Չնայած այն հանգամանքին, որ տնտեսական հարաբերությունների և հարկային համակարգի զարգացմանը զուգահեռ դրանց շրջանակները զգալիորեն կրճատվել են, այդուհանդերձ, ներկայումս ևս հարկային արտոնությունների շրջանակը բավականաչափ լայն է, մինչդեռ դրանց արդյունավետությունն ու հասցեականությունը շատ դեպքերում վիճահարույց են: Մասնավորապես, հայտնի է, թե դրանք ինչքանով են արդարացված ու հիմնավորված, նպաստում ե՞ն կոնկրետ խնդիրների լուծմանը և բավարարու՞մ են այն

հիմնական պայմաններին ու պահանջներին, որոնց առկայության պարագայում կապահովվեր այդ արտոնությունների արդյունավետությունը:

Անշուշտ, արդյունավետ հարկաբյուջետային քաղաքականության տեսանկյունից կարևորվում է հարկային արտոնությունների հետագա կիրառման նպատակահարմարության և դրանց սոցիալ-տնտեսական էֆեկտի գնահատումը: Միաժամանակ, թե արտոնությունների տրամադրումը, և թե դրանց վերացումը պետք է իրականացնել միայն համակողմանի վերլուծությունների արդյունքում, որպես հիմնական պայման դիտարկելով դրանց հասցեականության և սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման գործում օգտակարության ապահովումը: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ հարկային արտոնությունները, որպես կանոն, ունեն ինչպես դրական, այնպես էլ բացասական կողմեր թե պետության, և թե հարկ վճարողների համար: Այս առումով, հարկային արտոնությունների տրամադրման կամ դրանց դադարեցման ժամանակ, նախ և առաջ, պետք է գնահատել դրանցով պայմանավորված օգուտները և վնասներն ինչպես պետական բյուջեի, այնպես էլ հարկ վճարողների տեսանկյունից:

Ատենախոսության երրորդ «Տնտեսության պետական կարգավորման հարկային գործիքների զարգացման ուղղությունները» գլխում Հայաստանի Հանրապետությունում հարկային վարչարարության բարեփոխումների ռազմավարությունը պետք է հիմնվի հարկատու-հարկային մարմին գործընկերային փոխգործակցության գաղափարի վրա: Դա, նախ և առաջ, ենթադրում է հարկային հարաբերությունների մասնակիցների իրավունքների և պարտականությունների միջև հաշվեկշռվածության ապահովում, հարկային մարմինների գործունեության մեջ ժամանակակից տեխնոլոգիաների և էլեկտրոնային ծառայությունների ներդրում, հարկային իրավախախտումների կանխարգելման ուղղությամբ համապատասխան մեխանիզմների ներդրում, ինչպես նաև հարկային վարչարարության գնահատման չափանիշների (խնայողականություն, արդյունավետություն, որակ), պահանջների (հարկերի հավաքագրելիության բարձր մակարդակ, հարկային իրավախախտումների թվաքանակի կրճատում, հարկային վարչարարության իրականացման ծախսերի նվազեցում, հարկային մարմինների գործունեության բացություն և թափանցիկություն, նրանց կողմից մատուցվող ծառայությունների որակից հարկ վճարողների բավարարվածություն) և պայմանների

(հարկային վարչարարության ընթացակարգերի օպտիմալացում, հարկ վճարողների և հարկատուների միջև փոխգործակցության զարգացում) մշակում: Նման ռազմավարությունը, մեր կարծիքով, կնպաստի հարկերի հավաքագրելիության մակարդակի բարձրացմանը, հարկային իրավախախտումների ռիսկերի կրճատմանը և հարկային հարաբերությունների մասնակիցների շահերի և հետաքրքրությունների ներդաշնակեցմանը:

«Վ տնտեսական զարգացման ներկա փուլում, ինչպես արդեն նշվեց, հարկային մուտքերի ապահովումը և դրա շարունակական ավելացումը չափազանց բարդ և դժվար կլինի առանց հարկ վճարողների կողմից սեփական հարկային պարտավորությունների կամավոր կատարումը խթանող գործիքների կիրառման: Պատահական չէ այն իրողությունը, որ հարկային համակարգի կայուն զարգացումն ապահովվում է հիմնականում այն երկրներում, որոնցում հարկային վարչարարությունը կրում է գործընկերային համագործակցության բնույթ՝ հիմնված հաճախորդամետ կողմնորոշման և փոխադարձ վստահության վրա: Մինչդեռ, Հայաստանի Հանրապետությունում հարկային վարչարարության ոլորտում դեռևս պահպանվում են իշխանանական և ենթակայության սկզբունքի վրա հիմնված հարաբերությունները, ինչը նպաստում է պետության կողմից հարկատուների նկատմամբ կոշտ վերահսկողության իրականացմանը և շատ դեպքերում հարկային հարաբերությունների մասնակիցների միջև հակասությունների առաջացմանը: Դա, անշուշտ, բարենպաստ միջավայր է հանդիսանում կոռուպցիոն երևույթների տարածման և ստվերային տնտեսության ընդլայնման համար: Նման իրավիճակը պահանջում է հարկերի ժամանակին և ամբողջությամբ վճարման նկատմամբ իրականացվող վերահսկողական միջոցառումների մշտական կատարելագործում և հարկային իրավախախտումների համար պատասխանատվության խստացում:

Ատենախոսության **«Եզրակացություններ»** բաժնում ատենախոսը ամփոփելով հետազոտության արդյունքները ներկայացրել է դրանցից բխող առաջարկներ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՆՈՐՈՒՅԹԸ

Աշխատանքի հիմնական գիտական արդյունքները, որոնք պայմանավորված են հետազոտությունում առաջադրված խնդիրների լուծմամբ, կայանում են հետևյալում.

- հարկաբյուջետային ցուցանիշների և իրականացված քաղաքականության վերլուծության հիման վրա բացահայտվել են հանրապետությունում հարկային եկամուտների հավաքագրման հիմնախնդիրները և մշակվել են հարկային քաղաքականության կատարելագործման և դրա կանխատեսելիության բարձրացմանն ուղղված մոտեցումներ,
- հանրապետությունում հարկային կարգավորման գործիքակազմի համակողմանի վերլուծության արդյունքում գնահատվել է առանձին հարկատեսակների գծով կարգավորիչ գործառույթի գործնական իրացման մակարդակը և դրա հետևանքները տնտեսական գործընթացների կարգավորման վրա և առաջարկվել են մոտեցումներ տնտեսության պետական կարգավորման հարկային գործիքների արդյունավետության բարձրացման ուղղությամբ, մասնավորապես, հարկման բազաների և կիրառվող դրույքաչափերի տնտեսագիտական հիմնավորվածության բարձրացման վերաբերյալ,
- հարկային կարգավորման արդյունավետության բարձրացման, ինչպես նաև դրա տնտեսական և սոցիալական նպատակների արդյունավետ համադրման նպատակով մշակվել են ֆիզիկական անձանց եկամուտների և գույքի հարկման կատարելագործման ուղիներ,
- հարկային արտոնությունների ուղղությունների, դրանց հիմնավորվածության, շահառուների և հասցեականության քննարկման շրջանակներում մշակվել են մոտեցումներ հարկային արտոնությունների՝ որպես հարկային կարգավորման գործիքի կատարելագործման ուղղությամբ:

Ատենախոսությունում քննարկված հիմնախնդիրներից շատերը Հայաստանի Հանրապետությունում ամբողջական ու համակարգված ուսումնասիրման չեն ենթարկվել և չեն կրկնում այլոց կողմից առանձին հարցերի շուրջ կատարված ուսումնասիրությունները, որով էլ պայմանավորված է ստացված արդյունքների գիտական նորույթը:

Հարկային քաղաքականության կատարելագործման և հարկային կարգավորման բարելավման հիմնահարցերը դիտարկվել են ընդհանուր տնտեսական քաղաքականության և հարկային համակարգի գործունեության համալիրում, որի արդյունքում մշակված մոտեցումների գործնական կիրառումը, մեր կարծիքով, կընձեռի լայն հնարավորություններ Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման

համար: Առաջարկված մոտեցումները հիմնված են հանրապետության տնտեսության մեջ վերջին տարիներին ձևավորված իրավիճակի համակողմանի վերլուծության արդյունքում բացահայտված միտումների գնահատման վրա: Դրանց գործնական կիրառումը, մեր կարծիքով, թույլ կտա հանրապետությունում ձևավորել այնպիսի միջավայր, որն առավելագույնս կնպաստի հարկային քաղաքականության կատարելագործման և հարկային վարչարարության բարելավման հետ կապված խնդիրների լուծմանը:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՏԵՍԱՄԵԹՈՂԱԿԱՆ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ:

ԳԻՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՎԱՍՏԻՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության համար հիմք են հանդիսացել տնտեսագիտության տեսության դասական աշխատությունները, անցումային տնտեսությանը վերաբերող ուսումնասիրությունները, տնտեսական քաղաքականության տարբեր բնագավառների վերաբերող հայրենական և արտասահմանյան գրականությունը, հարկային հարաբերությունների ոլորտը կարգավորող ՀՀ օրենքները, իրավական այլ ակտերը: Հետազոտության համար տեղեկատվական հիմք են հանդիսացել ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության, Պետական եկամուտների կոմիտեի և համապատասխան պետական մարմինների պաշտոնական նյութերն ու տվյալները: Հետազոտության ընթացքում կիրառվել են տնտեսավիճակագրական, համակարգային, համեմատական և գործոնային վերլուծության մեթոդները:

Ատենախոսության մեջ ներկայացված գիտական արդյունքները հիմնականում հիմնավորված են և բխում են հեղինակի կողմից կատարված ուսումնասիրություններից և եզրահանգումներից: Այս ամենն ապահովել է ստացված արդյունքների հիմնավորվածության և հավաստիության անհրաժեշտ մակարդակը:

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Ատենախոսության տարբեր հատվածներում հեղինակը ներկայացնելով ժամանակակից տնտեսական հարաբերությունները՝ օգտագործում է «տնտեսության անցումային փուլ», «շուկայական հարաբերություններին անցման» եզրույթներ, որոնք, մեր կարծիքով, որպես ՀՀ ժամանակակից տնտեսական հարաբերությունները

բնութագրող ձևակերպումներ՝ ներկայումս ժամանակավրեպ են և չեն արտացոլում ՀՀ տնտեսության ներկայիս վիճակը: /էջ 13/ Նշվածը հակասության մեջ է մտնում նաև ատենախոսության 2.3 բաժնի առաջին պարբերության հետ, որտեղ հեղինակը ներկայացնում է ՀՀ-ում արդեն իսկ ձևավորված շուկայական տնտեսության մասին:

2. Ատենախոսության 1.2 բաժնում խոսելով Ա. Սմիթի կողմից մշակված հարկման 4 սկզբունքների մասին, հեղինակը ոչ միայն դրանք այդպես էլ չի ներկայացնում և չի տալիս դրանց վերաբերյալ սեփական տեսակետները, ներկայացնում է միայն տարբեր հեղինակների կողմից տեսակետներ, այլև չի ներկայացնում ժամանակակից պայմաններում դրանց զուգահեռումները: /էջ 19/

3. Ատենախոսության 2.2 բաժինը թեև վերնագրված է «Տնտեսության հարկային կարգավորման գործիքակազմի վերլուծությունը և դրա արդյունավետությունը», սակայն այդ բաժնում առավելապես ներկայացված են Հարկային օրենսգրքի տարբեր հարկատեսակների մասով արտոնությունների հատվածը. բացակայում է հարկային առանձին ուղղություններով և տարբեր գործիքակազմի հիման վրա առաջացած փաստացի ցուցանիշների փոփոխությունների վերլուծությունը, բացակայում է նաև առանձին գործոնների ազդեցության չափելիությունը, հետևաբար՝ որևէ գործիքակազմի կիրառման դրական կամ բացասական, այդ թվում՝ արդյունավետության գնահատականը հիմնականում կրում է դեկլարատիվ բնույթ՝ իր հիմքում չունենալով այդ արդյունավետության չափելիության ցուցանիշներ:

4. Ատենախոսության 2.3 բաժնում որպես հարկային համակարգի կարգավորման գերակա ուղղություններ հեղինակի կողմից ներկայացվում են հարկային արտոնությունները, իսկ տնտեսության վրա դրանց ազդեցությունը մեկնաբանվում է առավելապես «հարկային ծախսերի» մոտեցմամբ՝ առանց տնտեսական բազմաթիվ այլ ցուցանիշների վրա ազդեցությունը գնահատելու: Սակայն, մեր կարծիքով, ատենախոսության վերլուծական մասն ավելի կշահեր, եթե զուգահեռաբար ուսումնասիրվեր նաև, թե արտոնությունները ձեռնարկատիրության տարբեր ոլորտներում ունեցել են արդյոք դրական մուլտիպլիկատիվ էֆեկտ, թե՛ ոչ, արդյոք առկա են եղել ոլորտներ, որոցում ազդեցությունը եղել է դրական, միգուցե մյուսներում՝ բացասական, հետևաբար, աշխատանքում բացակայում են նաև այդ ուղղությամբ գնահատականները:

5. Ատենախոսության 3-րդ գլուխը նվիրված է հարկային գործիքների զարգացման նոր ուղղությունների և մոտեցումների ներկայացմանը, ինչի հիման վրա էլ պետք է ներկայացվի 4-րդ գիտական նորույթը: Սակայն, 3.1 բաժնում գերակշռում են արդեն իսկ հայտնի փաստերի և իրավական ակտերի ներկայացումն ու մեկնաբանումը, կրկին բավական մեծ անդրադարձ է կատարվում հարկային արտոնությունների իրավական և մեթոդական մոտեցումներին, իսկ դրանց ցուցանիշներով չափելիությունը, հետևաբար՝ հարկային քաղաքականության վրա ազդեցությունը՝ բացակայում են: Թեև նույն բաժնում ներկայացվում են հարկային քաղաքականության մշակման մոտեցումներ, սակայն մինչ այդ բացակայում են նաև այն ցուցանիշների վերլուծությունները և դրանց հիման վրա գնահատականները՝ գործող հարկային քաղաքականությունը տնտեսության և անհատների վրա բացասական կերպով ազդելու մասով, ինչպես նաև բացակայում է առաջարկվող քաղաքականության ներդրմամբ կանխատեսվող ցուցանիշների դրական փոփոխությունները, հետևաբար՝ առաջարկության նպատակահարմարությունը:

Մասնավորապես, 91-րդ էջում ներկայացված առաջարկությունների 3-րդ կետով հեղինակի կողմից առաջարկվում է հարկային համակարգի արդյունավետության ապահովման նպատակով կատարել տնտեսության համալիր վերլուծություն, հաշվի առնել դրա վրա ազդող գործոնների առկայությունը, փոփոխության միտումներն ու զարգացումները: Սակայն, կարծում ենք, որ ատենախոսության մեջ հենց հեղինակի կողմից պետք է կատարվեին այդպիսի վերլուծություններ, տրվեին համապատասխան գնահատականներ, որպեսզի առաջարկվող նոր հարկային քաղաքականությունը լիներ հիմնավորված:

6. Ատենախոսության ողջ բովանդակությունը, հարկային համակարգի կարգավորման համատեքստում, հեղինակի կողմից ներկայացված է բյուջետային մուտքերի ապահովման տեսանկյունից, իսկ հարկային արտոնությունները բնութագրվում են որպես «հարկային ծախսեր»: Ատենախոսությունը կշահեր, եթե զուգահեռաբար թվային ցուցանիշներով վերլուծվեր նաև տնտեսվարողների գործունեության և ֆիզիկական անձանց կենսաապահովման վրա հարկային համակարգի գործող և առաջարկվող փոփոխություններով քաղաքականությունների

ազդեցությունը, կատարվել զուգահեռ գնահատումներ, ինչն աշխատանքում բացակայում է:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Դիտողությունները անկասկած չեն նսեմացնում հետազոտության արժանիքները, դրանք հիմնականում հետապնդում են ատենախոսությունում քննարկվող հիմնահարցերի հետագա ուսումնասիրությունների խորացման և բարելավման նպատակ: Ընդհանուր առմամբ, Ա.Ժ.Սարգսյանի թեկնածուական ատենախոսությունը ունի գիտագործնական նշանակություն և արժանի է բարձր գնահատականի, բերված եզրահանգումները, մեթոդաբանական մոտեցումները և գործնական առաջարկությունները կարող են օգտակար լինել ՀՀ հարկային վարչարարության արդյունավետության բարձրացման համար:

Հետազոտության հիմնական արդյունքները հրապարակված են: Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է հետազոտության բովանդակությանը և արտացոլում է աշխատանքի կարևոր դրույթներն ու արդյունքները:

«Տնտեսության պետական կարգավորման հարկային գործիքների կիրառման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» ատենախոսությունը բավարարում է «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 7-րդ կետերի, ինչպես նաև ՀՀ ԲՈԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ նրա հեղինակ **Անի Ժորայի Սարգսյանը** արժանի է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը՝ **Ը.00.02-«Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում»** մասնագիտությամբ:

Պաշտոնական ընդդիմախոս՝
Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի
Կառավարչական հաշվառման
և աուդիտի ամբիոնի վարիչ
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Վ.Կ. **Լ.Լ. Գրիգորյան**

Լ.Լ. Գրիգորյանի ստորագրությունը հաստատում եմ՝
ՀՊՏՀ գիտական քարտուղար

Ս.Լ. **Ս.Լ. Դարբինյան**

01 դեկտեմբերի 2022 թ.

